




ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	2
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	6
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման.....	6
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	8
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի	11
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	13
ԱՄՓՈՓՈՒՄ.....	15

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


Սույն վերլուծությունը նվիրված է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի¹ ուսումնասիրությանը:

Համաձայն բյուջետային ուղերձի մաս հանդիսացող «2026 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին» Երևանի քաղաքապետի զեկույցի՝ Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում 2026 թվականին առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը: Նշվում է, որ դրա համար հիմք են հանդիսանում Երևան քաղաքի զարգացման 2024-2029 թվականների հնգամյա և 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, 2025 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները:

2026 թվականի համար Երևանի բյուջեով պլանավորվել են 151.5 մլրդ դրամի եկամուտներ՝ 2025թ. հաստատված բյուջեով նախատեսվածից 7.9 մլրդ դրամով կամ 5.0%-ով պակաս: Բյուջեի ծախսերը ևս պակաս են լինելու 2025-ի ցուցանիշից՝ 2.7 մլրդ դրամով կամ 1.7%-ով՝ կազմելով 156.8 մլրդ դրամ:

Նախատեսվում է, որ բյուջեն կունենա 5.3 մլրդ դրամ պակասուրդ:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ



¹ Ընդունվել է 23.12.2025թ.՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ,
<https://www.yerevan.am/edfiles/iravakan%20akter/....rar>

2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ


Ակնկալվում է, որ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն 151.5 մլրդ դրամ՝ 2025-ի բյուջեով պլանավորված ցուցանիշից 5.0%-ով կամ 7.9 մլրդ դրամով պակաս: Տարեկան ճշտված պլանի² ցուցանիշի համեմատ նվազումը կազմում է 3.8% կամ 5.9 մլրդ դրամ:

2026թ. բյուջեի ընդհանուր եկամուտների նվազման պատճառը «պաշտոնական դրամաշնորհներ» և «այլ եկամուտներ» խմբերում ընդգրկված եկամտատեսակների էական նվազումն է:

Բյուջեի սեփական եկամուտների³ պլանավորվող ցուցանիշը 94.9 մլրդ դրամ է՝ 2025-ի հաստատված բյուջեով ծրագրվածից 5.2%-ով կամ 4.7 մլրդ դրամով ավելի: Աճին նպաստել է միայն «հարկերի և տուրքերի» 11.8%-ով ավելացումը, մինչդեռ «այլ եկամուտների»՝ սեփական եկամուտներ համարվող եկամտատեսակների ընդհանուր մեծությունը նվազել է 2.8%-ով կամ 1.2 մլրդ դրամով:

Երևան քաղաքի ոչ սեփական եկամուտները, համաձայն 2026 թվականի բյուջեի, կազմելու են 56.6 մլրդ դրամ՝ 2025 թվականի ցուցանիշից 18.2%-ով կամ 12.6 մլրդ դրամով պակաս:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները, մլրդ դրամ⁴



² 2025 թվականի բյուջեի ճշտված պլանի տարեկան ցուցանիշները վերցված են 2025թ. բյուջեի ինն ամիսների կատարման հրապարակված հաշվետվությունից՝ <https://www.yerevan.am/uploads....pdf>

³ Երևան քաղաքի բյուջեի սեփական եկամուտներ են համարվում «Հարկեր և տուրքեր» հոդվածի և «Այլ եկամուտներ» հոդվածի բոլոր եկամտատեսակները, բացի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներից»:

⁴ Գծապատկերը կառուցվել է 2022-2024 թվականների բյուջեների կատարման հաշվետվությունների և 2025 և 2026 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի եկամուտների թվում **«հարկերը և տուրքերը»** կազմելու են 55.0 մլրդ դրամ՝ 2025թ. ցուցանիշից 11.8%-ով ավելի: Բյուջեի ընդհանուր եկամուտների նվազմանը դրանց աճը հակազդելու է 3.6 տոկոսային կետով:

«Հարկերի և տուրքերի» աճն առավելապես պայմանավորված է անշարժ գույքի դիմաց հարկերի 36.6%-ով կամ 7.2 մլրդ դրամով աճով՝ ավելի շատ, քան «Հարկերի և տուրքերի» ընդհանուր աճն է: Անշարժ գույքի դիմաց հարկերի աճը «Հարկերի և տուրքերի» ընդհանուր աճին նպաստելու է շուրջ 14.6 տոկոսային կետով: Պլանավորվում է, որ դրանք 2025-ի 19.6 մլրդ դրամից 2026-ին հասնելու են 26.8 մլրդ դրամի: **Աճի հիմնական պատճառն անշարժ գույքի գույքային հարկի հաշվարկման նոր մեթոդաբանության կիրառումն է (ինչպես և 2025-ի բյուջեում)⁵:**

Նախատեսվում է, որ փոխադրամիջոցների համար գույքահարկի ծավալը կկազմի 14.3 մլրդ դրամ: Դրա աճի տեմպը նախորդ տարվա 5.2%-ի համեմատ դանդաղել է 3.2 տոկոսային կետով՝ «հարկերի և տուրքերի» աճին ունենալով նախորդ տարվա համեմատ եռակի ցածր նպաստում՝ 0.6 տոկոսային կետ:

«Հարկերի և տուրքերի» ընդհանուր մեծության աճին 3.4 տոկոսային կետով հակազդել է տեղական տուրքերի ծավալի՝ 2025-ի բյուջեի համեմատ 11.1%-ով նվազումը: Նվազման հիմնական պատճառը համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար գանձվող տուրքերի զգալի՝ 13.9%-ով կամ 1.6 մլրդ դրամով նվազումն է: Նվազումը մեծամասամբ պայմանավորված է համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար վճարվող տուրքերի նվազմամբ:

Ակնկալվում է, որ 2026-ին ևս (ինչպես 2025-ին) *համայնքային բյուջե վճարվող պետական տուրքերը* գրեթե զրոյական նպաստում կունենան «հարկեր և տուրքեր» ցուցանիշի նվազման վրա:

Պաշտոնական դրամաշնորհների պլանավորվող ծավալը տարիներ շարունակ նվազում է: Արդյունքում, 2026-ի ծրագրվող ցուցանիշը 2019-ից ի վեր ամենաբարձր՝ 2021-ի հաստատված բյուջեի ցուցանիշից 62.7%-ով պակաս է: Ակնկալվում է, որ պաշտոնական դրամաշնորհները 2026-ին կկազմեն 9.6 մլրդ

⁵ Անշարժ գույքի գույքային հարկի հաշվարկման նոր համակարգն ուժի մեջ է մտնում աստիճանաբար՝ 2023-ին գույքահարկը հաշվարկվել է կադաստրային արժեքի 35%-ից, 2024-ին՝ 50%-ից, 2025-ին՝ 75%-ից, իսկ 2026-ից՝ արդեն 100%-ից: Այսինքն՝ 2026-ին գույքահարկի բազայի աճը 2025-ի համեմատ կազմելու է $(100-75) / 75 \times 100\% \approx 33.3\%$:

դրամ՝ 2025-ի հաստատված բյուջեի ցուցանիշից 13.7%-ով պակաս: Դրանց հիմնական մասը՝ 98.5%-ը կամ 9.4 մլրդ դրամը, կկազմեն կառավարման այլ մակարդակներից ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները: Դրանցից շուրջ 8.2 մլրդ դրամը կազմում են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, 1.2 մլրդ դրամը՝ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները): **Կառավարման այլ մակարդակներից ստացված ընթացիկ և կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհները 2025-ի համեմատ նվազելու են՝ համապատասխանաբար 9.0%-ով և 52.1%-ով: 2026թ. միջազգային կազմակերպություններից ո՛չ ընթացիկ և ո՛չ էլ կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն նախատեսվում:**

2026 թվականի բյուջեով ևս (ինչպես և նախորդ տարիներին) նախատեսվում է, որ ընդհանուր եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 57.4%, կունենան բյուջեի «**այլ եկամուտները**», որոնք 2025թ. հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշի համեմատ կնվազեն 12.2 մլրդ դրամով կամ 12.3%-ով և կկազմեն 86.9 մլրդ դրամ:

«Այլ եկամուտների» 2025-ի համեմատ նվազման հիմնական պատճառն ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից համայնքի բյուջեի եկամուտների նվազումն է՝ 40.8%-ով կամ 32.4 մլրդ դրամով: Այդ եկամտատեսակն «այլ եկամուտների» նվազմանը նպաստել է 32.7 տոկոսային կետով: Հիշյալ 32.4 մլրդ դրամի նվազումը 11.1 մլրդ դրամով պայմանավորված է պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար պետական բյուջեից ստացվող միջոցների 19.1%-ով նվազմամբ, և 21.3 մլրդ դրամով՝ «օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների» գրեթե զրոյացմամբ:


Նախատեսվում է, որ «վարչական գանձումները» 2025-ի համեմատ կտրուկ՝ շուրջ 2.3 անգամ, կաճեն և կկազմեն 34.9 մլրդ դրամ: Աճը պայմանավորված է տեղական վճարների աճով, որոնք 2025-ի համեմատ աճելով 132.0%-ով, կկազմեն 34.7 մլրդ դրամ: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է աղբահանության վճարը, որը ծրագրվել է 5.3 մլրդ դրամ՝ 2025-ի ցուցանիշից 32.5%-ով ավելի: Աճը պայմանավորված է աղբահանության վճարի հաշվարկման նոր մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ բնակելի նպատակային նշանակության շենք-շինություններում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ ընդհանուր մակերեսի: Տեղական վճարների մեջ ամենամեծ կշիռն ունեն «այլ տեղական վճարները». դրանց գծով նախատեսվում են 26.3 մլրդ դրամի մուտքեր՝ 2025

թվականի հաստատված ցուցանիշից 3.3 անգամ կամ 18.3 մլրդ դրամով ավելի: Ավելացումը պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում կատարված լրացումներով, մասնավորապես՝ համայնքի վարչական տարածքում կանոնավոր փոխադրումները տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) իրականացնելու դեպքում կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու դիմաց վճարը որպես տեղական վճար սահմանմամբ:

Ակնկալվում է, որ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները նույնպես աճելու են՝ 31.8%-ով, և կկազմեն 1.5 մլրդ դրամ:

Ի դեպ, նախկինում՝ 2020թ. ի վեր, Երևան քաղաքի տարեկան հաստատված բյուջեի ընդհանուր եկամուտների ցուցանիշները, բացի 2023 թվականից, ճշտված պլանով մշտապես նվազեցվել են (Գծապատկեր 3): Մտահոգություն կա, որ 2026-ին ևս տարվա ընթացքում կկատարվեն բյուջեի այնպիսի ճշգրտումներ, որոնց արդյունքում առանց այն էլ նվազ պլանավորված տարեկան մեծությունն էլ ավելի կնվազի՝ լրացուցիչ խնդիրներ առաջացնելով բյուջեի կատարման շրջանակում:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի եկամուտներն ըստ հաստատված և ճշտված պլանների, մլրդ դրամ



Երևանի բյուջեի եկամուտների 2026-ի համար կանխատեսվող նվազումը հիմնականում պայմանավորված է ոչ սեփական եկամուտների (պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների ընդհանուր գումարի) 18.2%-ով կամ 12.6 մլրդ դրամով կրճատմամբ: Այսինքն՝ չնայած նրան,

որ սեփական եկամուտները 4.7 մլրդ դրամով աճել են՝ հիմնականում պարզապես պայմանավորված անշարժ գույքի գույքային հարկի և աղբահանության վճարի հաշվարկման մեթոդաբանությունների փոփոխությամբ, ընդհանուր եկամուտները, միևնույն է, նվազելու են՝ 7.9 մլրդ դրամով: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է «Լույս» հիմնադրամի Երևանի 2025թ. բյուջեին նվիրված վերլուծությունում արված դիտարկումն առ այն, որ Երևանի բյուջեի եկամուտները ռիսկային բարձր մակարդակի կախվածություն ունեն ՀՀ պետական բյուջեից:

3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Համաձայն Երևանի 2026 թվականի բյուջեի՝ ընդհանուր ծախսերը կազմելու են 156.8 մլրդ դրամ՝ 2025 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 2.7 մլրդ դրամով կամ 1.7%-ով պակաս: 2025թ. տարեկան ճշտված պլանի ցուցանիշի համեմատ այն պակաս է 9.3 մլրդ դրամով կամ 5.6%-ով:

3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընդհանուր ծախսերի 90.7%-ը կազմում են ընթացիկ ծախսերը, որոնց պլանավորվող մեծությունը 142.3 մլրդ դրամ է: 2025-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ ընթացիկ ծախսերը նվազելու են 4.9%-ով կամ 7.4 մլրդ դրամով: 2025թ. տարեկան ճշտված պլանի համեմատ 2026-ի ընթացիկ ծախսերի պլանային մեծության նվազումը փոքր-ինչ ավելի է՝ 6.1% կամ 9.3 մլրդ դրամ:

2025-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ ընթացիկ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է «այլ ծախսերի», «սոցիալական նպաստների և կենսաթոշակների» և «ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի» նվազմամբ: Դրանք նվազել են համապատասխանաբար 32.1, 34.2 և 5.5 տոկոսով՝ ընթացիկ ծախսերի նվազմանը նպաստելով 7.8, 1.7 և 0.6 տոկոսային կետով:


2026-ի բյուջեի «առանձնահատկություններից» մեկը դարձյալ պարզևատրույթների «տպավորիչ» աճն է: Այս անգամ էլ պարզևատրույթների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2026-ի բյուջեով հատկացվող միջոցները 2025-ի համեմատ աճելու են 73.8%-ով: Բազմիցս նշվել է, որ այս ծախսերը 2023-ից ի վեր տարեցտարի կտրուկ աճում են: Այսպես, 2023 թվականին նախորդ տարվա բյուջեով հաստատված ցուցանիշի համեմատ աճը կազմել է 50.6%, 2024 թվականին՝ 86.6%, 2025 թվականին՝ 46.1%: Այսինքն՝ չորս տարվա ընթացքում պարզևատրույթների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար հատկացվող մեծությունը կաճի ավելի քան 7.1 անգամ: Ավելին, 2025թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվության համաձայն՝ 2025-ի տարեկան ճշտված պլանով նախատեսվում է

պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար տարվա արդյունքներով հատկացնել 2.3 անգամ ավելի մեծ գումար, քան նախատեսվել էր ի սկզբանե՝ 2025-ի հաստատված բյուջեով: Եվ, հատկանշական է, որ 2025թ. ինն ամիսների կատարողականով այս ուղղությամբ արդեն իսկ փաստացի վճարված գումարը՝ 1.4 մլրդ դրամը, 1.8 անգամ ավելի է, քան 2025-ի հաստատված բյուջեով նախատեսված էր ամբողջ տարվա համար:

Ընդհանուր ծախսերի՝ տնտեսագիտական դասակարգմամբ մյուս բաղադրիչի՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների⁶ 2026թ. պլանավորվող մեծությունը 14.5 մլրդ դրամ է՝ 2025թ. հաստատված բյուջեի ցուցանիշից 47.2%-ով կամ 4.7 մլրդ դրամով ավելի: Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների հիմնական մասը կազմող կապիտալ ծախսերը նույնպես աճելու են՝ 19.3%-ով կամ 3.5 մլրդ դրամով և կազմելու են 21.3 մլրդ դրամ: Հատկանշական է, որ 2025թ. ճշտված պլանի համեմատ թե՛ կապիտալ ծախսերը և թե՛ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունները նվազելու են՝ համապատասխանաբար՝ 5.5%-ով կամ 1.2 մլրդ դրամով և 0.3%-ով կամ 43.5 մլն դրամով:

Ընթացիկ ծախսերի նվազումն ընդհանուր ծախսերի նվազմանը նպաստելու է 4.6 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների աճը դրան հակազդելու է 2.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ⁷




⁶ Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի («+» նշանով) և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի («-» նշանով) հանրագումարը:

⁷ Գծապատկերը կառուցվել է 2022-2024 թվականների բյուջեի կատարման հաշվետվությունների և 2025 և 2026 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

Կապիտալ ծախսերի՝ 2026թ. բյուջեով ծրագրվող մակարդակի կատարման իրատեսականության վերաբերյալ առկա է լուրջ թերահավատություն, քանի որ մի քանի տարի շարունակ կապիտալ ծախսերի կատարողականի առումով պատկերը բավական անմխիթար է (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի՝ ճշտված պլանի նկատմամբ թերակատարումը, %⁸



*Քանի որ 2025թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում այդ ամիսների ճշտված պլանը տրված չէ, ինն ամիսների փաստացի մեծությունները համեմատվել են հաշվետվությունում ներկայացվող տարեկան ճշտված պլանի ցուցանիշների հետ:

2025-ը դեռևս չի ավարտվել, սակայն թերակատարման «տխուր ավանդույթը» շարունակվում է: Այսպես, 2025-ի բյուջեով նախատեսվել էին 17.9 մլրդ դրամի կապիտալ ծախսեր, այնուհետև ինն ամիսների կատարողականի հաշվետվությունում նշված ճշտված պլանով դրա ծրագրվող մեծությունը բարձրացվել է մինչև 22.6 մլրդ դրամ, սակայն ինն ամիսների ընթացքում փաստացի կապիտալ ծախսերը կազմել են ընդամենը 6.7 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված պլանի 29.8%-ը:

3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Սույն վերլուծությունում ծախսերի՝ ըստ գործառնական դասակարգման ուսումնասիրության նպատակով դրանք դասակարգվել են հինգ ուղղություններում.


- «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» և «Պաշտպանություն» բաժինները ընդգրկվել են **«Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ»** ուղղությունում,

- **«Տնտեսական ծառայություններ»** ուղղությունը ներառում է «Տնտեսական հարաբերություններ» և «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժինները,

⁸ Գծապատկերը կառուցվել է բյուջեի կատարման 2020-2024 թվականների տարեկան և 2025 թվականի ինն ամիսների հաշվետվությունների հիման վրա:


- «Առողջապահություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն», «Հանգիստ, մշակույթ և կրոն» և «Սոցիալական պաշտպանություն» բաժինները ներառված են «**Սոցիալական ծառայություններ**» ուղղությունում,
- «**Կրթություն**» ուղղությունում ներառված է միայն «Կրթություն» բաժինը,
- «**Պահուստային ֆոնդ**»:

Գծապատկեր 6. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) կառուցվածքը, %



2026թ. ևս (ինչպես և 2025-ին) բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն **տնտեսական ծառայություններին** ուղղվող ծախսերը՝ 47.2%: Դրանք կազմելու են 74.0 մլրդ դրամ: Տնտեսական ծառայություններին 30.7% տեսակարար կշռով հաջորդում են **կրթության ոլորտին** ուղղվող ծախսերը, որոնք կազմելու են 48.2 մլրդ դրամ: «**Սոցիալական ծառայություններ**» ուղղությունը 12.5% տեսակարար կշռով երրորդն է՝ 19.6 մլրդ դրամ ծավալով: Տեսակարար կշռով նախավերջին տեղում է «**Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ**» ուղղությունը՝ 9.5%: Այս ուղղության ծախսերը կազմելու են 14.9 մլրդ դրամ: **Պահուստային ֆոնդի ձևավորմանն** ուղղվող միջոցները 2025-ի 197.5 մլն դրամից նվազելու են մինչև 50.0 մլն դրամ, ինչի պատճառով դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում նվազելու է մինչև 0.03%:

Գծապատկեր 7. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2025-ի բյուջեի ցուցանիշի համեմատ աճելու են 3.1%-ով կամ 2.2 մլրդ դրամով, իսկ ընդհանուր ծախսերի մեջ տեսակարար կշիռը՝ 2.2 տոկոսային կետով: Այս ուղղությունում ընդգրկված երկու բաժինների գծով ծախսերն էլ նպաստելու են աճին: Մասնավորապես, «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժինը ուղղության աճին նպաստելու է 2.3 տոկոսային կետով, իսկ «Տնտեսական հարաբերություններ» բաժինը՝ 0.7 տոկոսային կետով: Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2025 թվականի ինն ամիսների բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված տարեկան ճշտված պլանի ցուցանիշից 6.0%-ով կամ 4.8 մլրդ դրամով պակաս են լինելու:

«Տնտեսական ծառայություններ» ուղղության բաղադրիչներից «Շրջակա միջավայրի պաշտպանություն» բաժնի գծով կատարվելիք ծախսերը 2025թ. հաստատված բյուջեի համեմատ աճելու են 1.7 մլրդ դրամով կամ 13.2%-ով և կազմելու են 14.2 մլրդ դրամ, որից 7.9 մլրդ դրամն աղբահանման ծախսերն են, որոնք 2026-ին ընթացիկ տարվա համար պլանավորված ցուցանիշի համեմատ կաճեն 11.6%-ով կամ 0.8 մլրդ դրամով:

Տնտեսական հարաբերություններին ուղղվելիք ծախսերի 0.9%-ով կամ 0.5 մլրդ դրամով աճը հիմնականում պայմանավորված է «ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների» և «այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների» գծով ծախսերով: Դրանց նպաստումները տնտեսական հարաբերություններին ուղղվելիք ծախսերի աճին կազմում են համապատասխանաբար 5.8 և 3.3 տոկոսային կետ: Տրանսպորտային ծախսերի նվազումը 8.5 տոկոսային կետով հակազդել է տնտեսական հարաբերություններին ուղղվելիք ծախսերի աճին: 2025-ի ճշտված պլանի հետ համեմատելու դեպքում խոսքը կգնա «Տնտեսական

հարաբերություններ» բաժնի գծով կատարվելիք ծախսերի նվազման մասին՝ 8.0%-ով կամ 5.2 մլրդ դրամով:

Կրթությանն ուղղվող ծախսերը փոքր-ինչ՝ 1.1%-ով կամ 0.5 մլրդ դրամով նվազելու են: Նվազման պատճառը նախադպրոցական կրթությանն ուղղվող ծախսերի 19.3% կրճատումն է՝ 17.9 մլրդ դրամից մինչև 14.5 մլրդ դրամ: Այս ուղղության մեջ մտնող «միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի ծախսերը 2025-ի համեմատ ավելանալու են 4.3%-ով կամ 0.5 մլրդ դրամով՝ կազմելով 11.9 մլրդ դրամ և կրթության ծախսերի նվազմանը հակազդելով 1.0 տոկոսային կետով: Կրթությանն ուղղվող ծախսերի նվազմանը 3.4 տոկոսային կետով հակազդել է «կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների» համար կատարվող ծախսերի 1.6 մլրդ դրամով աճը:

Սոցիալական ծառայությունների ծախսերը կնվազեն 18.2%-ով կամ 4.4 մլրդ դրամով և կկազմեն 19.6 մլրդ դրամ: Դրանք ընդհանուր ծախսերի նվազմանը կնպաստեն 2.7 տոկոսային կետով: Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի նվազումն առավելապես պայմանավորված է լինելու «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժնի ծախսերի՝ 2025-ի հաստատված բյուջեի համեմատ 3.3 մլրդ դրամով կամ 27.3%-ով կրճատմամբ: «Առողջապահություն» և «Հանգիստ, մշակույթ և կրոն» բաժինների ծախսերը ևս նվազելու են՝ համապատասխանաբար 29.9%-ով և 10.9%-ով:

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերը 2025թ. հաստատված բյուջեի համեմատ փոքր-ինչ՝ 1.0%-ով կամ 0.2 մլրդ դրամով, աճելու են և բյուջեի ընդհանուր ծախսերի նվազմանը կհակազդեն 0.1 տոկոսային կետով: 2025թ. տարեկան ճշտված պլանի համեմատ դրանք նվազելու են 6.1%-ով կամ 1.0 մլրդ դրամով, իսկ ընդհանուր ծախսերի նվազմանը նպաստելու են 0.6 տոկոսային կետով:

3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Բնականաբար չափազանց կարևոր է ուսումնասիրել, թե ի՞նչ ծրագրերի իրականացման համար են ծախսվելու բյուջեի միջոցները: Ուսումնասիրության արդյունքում ներկայացված են Երևան քաղաքի 2026թ. բյուջեով նախատեսվող որոշ ծրագրերի վերաբերյալ առավել ուշագրավ փաստեր:

«Երևանի մեթրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում» ծրագրով նախատեսվել է 2.0 մլրդ դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների **մեկնարկի** իրականացման համար: Հիշեցնենք, որ 2025-ի բյուջեով նույնպես այս ծրագրի գծով ծախսեր էին նախատեսվել՝ 9.6 մլրդ դրամ, իսկ ուղերձ-բացատրագրում բառացի գրված է՝

«Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար»: Այսինքն՝ ենթադրաբար, ընթացիկ տարում կառուցման աշխատանքներ չեն իրականացվել և աշխատանքները 2026-ին նոր միայն կմեկնարկեն, այն էլ ընթացիկ տարվա բյուջեով նախատեսվածից մի քանի անգամ փոքր ծավալով:

«Նախագծային աշխատանքներ» ծրագրով նախատեսվել է 1.1 մլրդ դրամ: Ուղերձում այս ծրագրի շրջանակներում ներառված է մետրոյի «Զորավար Անդրանիկ» և «Սասունցի Դավիթ» կայարանների միջանկյալ հատվածում նոր վերգետնյա կայարանի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը, ինչը նույնությամբ նշված էր նաև 2025-ի բյուջետային ուղերձում: Քանի որ 2025-ի բյուջեի կատարման ինն ամիսների հաշվետվությունում բացակայում է ըստ ծրագրերի ծախսերի կատարողականի մասին տեղեկատվությունը, **հնարավոր չի եղել պարզել՝ 2026-ի բյուջեով այս ծրագրի գծով ծախսերի նախատեսումը պայմանավորված է ընթացիկ տարվա ցածր կատարողականով, թե՛ մետրոպոլիտենի նոր կայարանի (այս դեպքում խոսքն իսկապես սոսկ վերգետնյա կայարանի կառուցման մասին է) կառուցումն այնքան բարդ գործ է, որ պահանջում է մի քանի տարվա նախագծանախահաշվային աշխատանք:**


«Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն» ծրագրով 2026-ի բյուջեով նախատեսվել է 100.0 մլն դրամ՝ 2025-ի բյուջեի ցուցանիշից 150.0 մլն դրամով պակաս: Չի բացառվում, որ նվազեցման պատճառն այս ծրագրի գծով տարիներ շարունակ արձանագրվող ցածր կատարողականն է: **Այսպես, 2023-ի բյուջեով ծրագրի համար նախատեսվել է 290.0 մլն դրամ, մինչդեռ փաստացի ծախս չի կատարվել: 2024-ի բյուջեի ցուցանիշը 250.0 մլն դրամ է, փաստացի ծախսը՝ ընդամենը 1.0 մլն դրամ, կատարողականը՝ 0.4%:** 2025-ի բյուջեով նախատեսվել է 250.0 մլն դրամ, սակայն 2025թ. ինն ամիսների հաշվետվությունում բացակայում է ըստ ծրագրերի կատարողականը ներկայացնող հավելվածը, որից հնարավոր կլիներ դատողություն անել տարվա կտրվածքով այս ծրագրի կատարման իրատեսականության վերաբերյալ:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ քաղաքային իշխանություններն ի վիճակի չեն ժամանակին և լիարժեք իրականացնելու քաղաքային զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող ծրագրերը, ինչի արդյունքում հանրությունն առավել հաճախ պարզապես խոստումներ է լսում:

4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն պակասուրդային է՝ ծրագրվում է 5.3 մլրդ դրամ պակասուրդ՝ 2025թ. հաստատված բյուջեով պլանավորված 0.1 մլրդ դրամի դիմաց:


Գծապատկեր 8. Երևան քաղաքի բյուջեի պակասուրդը, մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդը գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվելու է ներքին աղբյուրների հաշվին: Մասնավորապես, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում այլ մասնակցության դիմաց և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մասնավորեցումից համայնքային բյուջե մուտքագրվող միջոցները կազմելու են 0.8 մլրդ դրամ: Ըստ կանխատեսումների՝ ևս 4.5 մլրդ դրամ կազմելու է բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը: Արտաքին աղբյուրներից պակասուրդի ֆինանսավորմանն ուղղվելու է ընդամենը 35.3 մլն դրամ՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում ստացված վարկից:


Բյուջեի հաշվեկշռի (հավելուրդի կամ պակասուրդի) մասին տեղեկատվությանն անհնար է անդրադառնալ առանց լուրջ վերապահման: Բանն այն է, որ 2018 թվականից ի վեր բոլոր տարիների համար բյուջեի հաշվեկշռի փաստացի ցուցանիշը մշտապես կտրուկ (իսկ առավել հաճախ՝ տրամագծորեն) տարբերվել է պլանայինից (Գծապատկեր 9): Մասնավորապես, բոլոր այդ տարիների համար պլանավորվել է պակասուրդային բյուջե, սակայն անցած յոթ տարիներից միայն 2022 թվականին է փաստացի բյուջեն ունեցել պակասուրդ՝ այն էլ պլանավորվածից չափազանց մեծ շեղմամբ՝ պլանավորվել է 4.3 մլրդ դրամ պակասուրդ, սակայն դրա փաստացի մեծությունն ավելի քան կրկնակի մեծ է եղել:

Գծապատկեր 9. Երևան քաղաքի բյուջեի հաշվեկշռի պլանային և փաստացի մեծությունները, մլրդ դրամ



Ի դեպ, պլանային և փաստացի ցուցանիշների միջև զգալի շեղումները միայն պակասորդին չեն վերաբերում: Գործող իշխանության օրոք կատարված յոթ տարեկան բյուջեների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բյուջեի եկամուտները և ծախսերը հաստատված պլանի նկատմամբ չեն թերակատարվել միայն 2023-ին (Գծապատկեր 10):

Գծապատկեր 10. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականը հաստատված պլանի նկատմամբ, %



Ավելին, այնպիսի տպավորություն է, որ գալիք տարվա բյուջետային ցուցանիշները պլանավորելիս քաղաքային իշխանությունները հաշվի չեն առնում նախորդ տարվա և ընթացիկ տարվա անցած ամիսների փաստացի ձևավորված ցուցանիշները, որի արդյունքում, որպես կանոն, տվյալ տարվա փաստացի ցուցանիշներն էապես շեղվում են պլանավորված ցուցանիշներից: Դա խոսում է պլանավորման ցածր որակի մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան քաղաքի 2026թ. բյուջեի վերաբերյալ վերլուծության հիման վրա առանձնացվել են առանցքային հետևյալ հիմնական դրույթները.

• **2026թ. Երևանի բյուջեի եկամուտները նվազելու են. նույնիսկ անշարժ գույքի գույքային հարկի և աղբահանության վճարի հաշվարկման մեթոդաբանությունների փոփոխության հաշվին ակնկալվող զգալի ավելացումը չի փոխհատուցում պաշտոնական դրամաշնորհների և պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից ստացվող միջոցների կտրուկ կրճատումը:**

Կանխատեսվում է, որ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն 151.5 մլրդ դրամ: Դրանք 2025-ի բյուջեով պլանավորված ցուցանիշի համեմատ նվազելու են 5.0%-ով կամ 7.9 մլրդ դրամով՝ չնայած, որ սեփական եկամուտներն աճելու են 4.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված անշարժ գույքի գույքային հարկի և աղբահանության վճարի հաշվարկման մեթոդաբանությունների փոփոխությամբ: Նվազման պատճառն այն է, որ 12.6 մլրդ դրամով կրճատվելու են ոչ սեփական եկամուտները (պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների ընդհանուր գումարը): Այսինքն՝ ոչ սեփական եկամուտներից չափազանց մեծ կախվածությունն էապես սահմանափակում է արդյունավետ տեղական ինքնակառավարում իրականացնելու հնարավորությունը:

Ի դեպ, ոչ սեփական եկամուտների բաղադրիչներից առաջինի՝ պաշտոնական դրամաշնորհների պլանավորվող ծավալն արդեն մի քանի տարի շարունակ նվազում է. 2026-ի պլանավորվող ցուցանիշը 2019-ից ի վեր ամենաբարձր՝ 2021-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ պակաս է 62.7%-ով կամ 16.1 մլրդ դրամով:

Ստացվում է, որ ոչ միայն սեփական եկամուտների աճը հիմնականում ապահովվելու է պարզապես օրենսդրական փոփոխությունների շնորհիվ, այլև այն բավարար չի լինելու, որպեսզի 2026-ի ընդհանուր եկամուտները 2025-ի համեմատ չնվազեն:

• **Բյուջեի ծախսերը նվազելու են, սակայն դա չի խանգարելու, որ պարզևարարումները շարունակեն «տրամադրիչ» աճ գրանցել:**

Երևանի 2026 թվականի բյուջեի ընդհանուր ծախսերը կազմելու են 156.8 մլրդ դրամ՝ 2025 թվականի համեմատ նվազելով 2.7 մլրդ դրամով կամ 1.7%-ով:

Ընթացիկ ծախսերի նվազումն ավելի զգալի է. դրանք 2025 թվականի համեմատ նվազելու են 7.4 մլրդ դրամով կամ 4.9%-ով: **Չնայած դրան, ընթացիկ ծախսերի բաղադրիչներից մեկի՝ պարզևատրույմների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2026-ի բյուջեով հատկացվող միջոցները 2025-ի համեմատ աճելու են 73.8%-ով: Ի դեպ, դրանք 2023-ից սկսած տարեցտարի կտրուկ ավելանում են, և 2026-ի ցուցանիշն ավելի քան 7.1 անգամ գերազանցելու է 2022-ի ցուցանիշին: Ավելին, 2025թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվության համաձայն՝ 2025-ի տարեկան ճշտված պլանով պարզևատրույմներին, դրամական խրախուսումներին և հատուկ վճարներին ուղղվող միջոցները ընթացիկ տարվա հաստատված բյուջեով պլանավորվածի համեմատ էապես՝ 2.3 անգամ ավելացվել են, չնայած որ հաստատված բյուջեի ցուցանիշը նախորդ տարվա համեմատ արդեն իսկ զգալիորեն՝ 46.1%-ով բարձր է: Ի դեպ, 2025թ. ինն ամիսներին արդեն իսկ փաստացի ծախսվել է 1.8 անգամ ավելի շատ, քան 2025-ի հաստատված բյուջեով ամբողջ տարվա համար է նախատեսված:**

Հաշվի առնելով 2026թ. բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերի մակարդակը, ինչպես նաև մի քանի տարի շարունակ կապիտալ ծախսերի թերակատարման փաստը՝ 2026-ին նույնպես դրանց կատարման իրատեսականությունը կասկածների տեղիք է տալիս:

• *Բյուջեի ծախսերը՝ ըստ ծրագրերի ուսումնասիրության բացահայտում են քաղաքային իշխանության կողմից անարդյունավետ կառավարման հետևանքները: Այսպես.*

Բյուջետային ուղերձում նշված է, որ «Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում» ծրագրով նախատեսվել է 2.0 մլրդ դրամ՝ «Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների **մեկնարկի** իրականացման համար»: Մինչդեռ 2025-ի բյուջեով նույնպես այս ծրագրի գծով ծախսեր էին նախատեսվել՝ 9.6 մլրդ դրամի՝ բյուջետային ուղերձում նշելով՝ «**Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար**»: Այսինքն՝ ենթադրվում է, որ ընթացիկ տարում կառուցման աշխատանքներ չեն իրականացվել, և նախատեսվում է աշխատանքները մեկնարկել միայն 2026-ին՝ այն էլ ընթացիկ տարվա բյուջեով նախատեսվածից մի քանի անգամ պակաս միջոցներով:

Ուղերձում նշված է, որ «Նախագծային աշխատանքներ» ծրագրով նախատեսված գումարի մի մասն օգտագործվելու է «մետրոպոլիտենի» «*Զորավար Անդրանիկ*» և «*Սասունցի Դավիթ*» կայարանների միջանկյալ հատվածում նոր վերգեղանյա կայարանի կառուցման համար նախագծանախահաշվային

փաստաթղթեր ձեռք բերելու» համար: Նույն նպատակով միջոցներ են հատկացվել նաև ընթացիկ տարվա՝ 2025-ի բյուջեով: Քանի որ 2025-ի բյուջեի կատարման ինն ամիսների հաշվետվությունում բացակայում է ըստ ծրագրերի ծախսերի կատարողականի մասին տեղեկատվությունը, **հնարավոր չէ պարզել՝ 2026-ի բյուջեով այս ծրագրի գծով ծախսերի նախատեսման պատճառը ընթացիկ տարվա ցածր կատարողականն է, թե՞ միգուցե մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցումը (այս դեպքում իսկապես խոսքը սոսկ վերգետնյա կայարանի կառուցման մասին է) քաղաքային իշխանությունների համար այնքան բարդ գործ է, որ նախքան բուն կառուցման աշխատանքներին անցնելը պահանջում է մի քանի տարվա նախագծանախահաշվային աշխատանքներ:**

«Երևան քաղաքի գլխավոր հատկագծի իրականացման վերլուծություն» ծրագրով 2026-ի բյուջեով դարձյալ միջոցներ են նախատեսվել (ճիշտ է, 2025-ի բյուջեի ցուցանիշից 2.5 անգամ պակաս): Չի բացառվում, որ նվազեցման պատճառն այս ծրագրի գծով տարիներ շարունակ արձանագրվող ցածր կատարողականն է: **Այսպես, 2023-ի բյուջեով ծրագրի համար նախատեսված 290.0 մլն դրամի դիմաց փաստացի արձանագրվել է 0% կատարողական, 2024-ի 250.0 մլն դրամի դիմաց կատարողականը կազմել է 0.4%:** 2025-ի բյուջեով նույնպես նախատեսվել է 250.0 մլն դրամ, որի կատարման չափն ու իրատեսականությունը կարձանագրվի 2025թ. տարեկան արդյունքներով:

• *Բյուջեդային պլանավորման ոլորտում քաղաքային իշխանությունների հմտությունների առումով առկա են հիմնավոր կասկածներ:*

2018 թվականից ի վեր բոլոր տարիների համար բյուջեի հաշվեկշռի փաստացի ցուցանիշը մշտապես կտրուկ (իսկ առավել հաճախ՝ տրամագծորեն) տարբերվել է պլանայինից: **Մասնավորապես, բոլոր այդ տարիների համար պլանավորվել է պակասուրդային բյուջե, սակայն անցած յոթ տարիներից միայն 2022 թվականին է փաստացի բյուջեն ունեցել պակասուրդ, այն էլ պլանավորվածից չափազանց մեծ շեղմամբ՝ փաստացի պակասուրդն ավելի քան կրկնակի մեծ է եղել:**

Պլանային և փաստացի ցուցանիշների միջև զգալի շեղումները միայն պակասուրդին չեն վերաբերում: Այնպիսի տպավորություն է, որ գալիք տարվա բյուջետային ցուցանիշները պլանավորելիս քաղաքային իշխանությունները հաշվի չեն առնում նախորդ տարվա և ընթացիկ տարվա անցած ամիսների փաստացի ձևավորված ցուցանիշները, որի արդյունքում, որպես կանոն, տվյալ տարվա փաստացի ցուցանիշներն էապես շեղվում են պլանավորված ցուցանիշներից, ինչը խոսում է պլանավորման ցածր որակի մասին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: